

տառադարտեցաւ 'ի բանտ ցկեանս եւ սա տպանաւ :

Յետ կատարելոյ զամենայն՝ հրաման ետ Տիտոս հարթ հաւատար կործանել սր ինչ մնացեալ էր 'ի քաղաքէն եւ 'ի Տաճարէն , եւ հանել 'ի հիմանց զվէմս եւ առնել արօրադիր զերկիրն ուր երբեմն Երուսաղէմն էր , բայց կացին մնացին իբրեւ յիշտակարանք աշտարակքն Հիպպիկոս , Փասայել , Մարիամնէ , եւ շինուածք ինչ 'ի կողմն Սիօնի : Զկնի ամաց ինչ առին նաեւ զերկա ամրոցս առ Մեռեալ ծովուն Հռոմայեցիք՝ զորս գրաւեալ ունէին Հրէայք , այսինքն Հերովդիոն , Մաքերովն , եւ Մասսադա (73) :

Այսպէս լուծաւ քայքայեցաւ Հրէական տէրութիւնն , զկալուածս երկիրն նոցա վաճառեաց Կայսրն առեալ ըզգինսն յարքունիս , եւ ամենայն այր Հրէայ տայր Հռոմէական պետութեան զհարկսն , զոր յառաջագոյն Տաճարին տային . թոյլ ետ նոցա տէրութիւնն վարիլ կրօնիւք օրինաց եւ սովորութեամբք իւրեանց : Եւ գլխաւոր նոցին նահապետ ազգին նստէր 'ի Տիրերիա եւ ունէր տեսչութիւն 'ի վերայ ժողովրդանոցաց նոցա , ուսուցչաց եւ սպասաւորացն 'ի նոսին կարգելոյ :

Ընդ այլ ամենայն աւարտն Երուսաղէմի երեւելի էին եւ սոքա . եօթնաջանեան աշտանակք Տաճարին , Սեղանքն , սկաւառակքն , սկուտեղք , ամենեքեան կազմեալ յոսկւոյ սրբոյ . ծանրագին վարագոյրք , կամարք եւ հանդերձք քահանայապետացն յօրինեալ մարդարտովք . ծիրանի եւ կարմիր յոլով պահեալ 'ի դուրծ վարագուրաց . կինամոն , կասիա եւ այլ տեսակք ծխանելեաց . գանձք բազումք եւ զարդք սրբութեան , զորս բերեալ մատուցին Տիտոսի երկոքին պահապան քահանայքն Յեսու եւ Փենեհէս : Բարձ Տիտոս զգրուես եւ զսիւես Տաճարին՝ այլովքն հանդերձ եւ խաղացոյց 'ի Հռոմ . եւ ինքն այնպիսի երեւելի շքով եւ վայելուչ յաղթանակաւ եմուտ 'ի Հռոմ , որոյ նմանն չէր ուրեք երբէք երեւեալ . եւ զարդարեաց զՏաճարն խաղաղութեան՝ կառուցելոյ 'ի հօրէ իւրմէ՝ Վեսպիանոսն 'ի զարդուց եւ 'ի կահուցն Երուսաղէմի . բայց յաւուրս Կոմոդոսի Կայսեր հրդեհեցաւ Տաճարն խաղաղութեան եւ այրեցաւ կապուտն Երուսաղէմացոյ (189) եւ այլ մի մասն կորեաւ 'ի ծովու :